

**«ՎԱՆԱԶՈՐԻ Է.ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՊԵՏԱԿԱՆ  
ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ**

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

ՎՊՀ ՌԵԿՏՈՐ

Գ. Կ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

08.07.2015թ.

**ԿԱՆՈՆԱԿԱՐԳ**

**ՎՊՀ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՆՈՒԹՅԱՆ  
ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ, ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ԲՈՒՀԵՐՈՒՄ ԶԵՌՔ ԲԵՐԱԾ ԿՐԵԴԻՏՆԵՐԻ  
ԸՆԴՈՒՆՄԱՆ ԵՎ ՀԱՇՎԱՌՄԱՆ**

Ընդունված է գիտական խորհրդի նիստում

Արձանագրություն թիվ \_\_5\_\_

« 25 » \_\_06\_\_ 2015 թ.

Վանաձոր – 2015

## I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Կանաձորի Հ.Թումայանի անվան պետական համալսարանի (այսուհետ՝ Համալսարան) ուսանողների միջազգային շարժունության կազմակերպման, արտասահմանյան բուհերում ձեռք բերած կրեդիտների ընդունման և հաշվառման կանոնակարգը (հետագայում՝ Կանոնակարգ) սահմանում է Համալսարանի ուսանողների միջազգային ակադեմիական շարժունության հիմքերը, կարգը, պայմանները, արդյունքների հաշվառումը:

2. Սույն Կանոնակարգը մշակվել է համաձայն «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքների, ՀՀ կառավարության 27 դեկտեմբերի 2005թ. թիվ 2307-Ն «ՀՀ բարձրագույն կրթության համակարգում կրեդիտային համակարգի ներդրման մասին» որոշման, ՀՀ կառավարության 2011թ օգոստոսի 25-ի թիվ 1240-Ն որոշմանը կից «Բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորողների ակադեմիական շարժունության կարգ»-ի:

3. Սույն Կանոնակարգով սահմանված դրույթները տարածվում են սովորելու նպատակով կամավորության սկզբունքով, կամ արտասահմանյան բուհերի հետ կնքված համագործակցության ծրագրերով արտասահմանյան բուհեր ուղևորվող ուսանողների վրա:

4. Սույն Կանոնակարգը սահմանում է միջազգային ակադեմիական շարժունությունը որպես արտասահմանյան բուհերում ուսանողների ստացած մասնակի կրթությունը Համալսարանում այլ բուհերում ստացած ակադեմիական կրեդիտների հաշվառման պայմանով:

5. Ակադեմիական շարժունության իրականացման եղանակներից են.

ա) կրկնակի աստիճանաշնորհման կրթական ծրագրերի (երկու ավարտական փաստաթուղթ) շրջանակներում ուսանելը,

բ) համատեղ աստիճանաշնորհման կրթական ծրագրերով (մեկ ավարտական փաստաթուղթ) ուսանելը,

գ) միջբուհական համագործակցության, այդ թվում՝ ակադեմիական փոխանակման ծրագրերի շրջանակներում ուսանելը,

դ) վերապատրաստում (այդ թվում՝ լեզվական) անցնելը,

ե) ուսումնական (հետազոտական, արտադրական) պրակտիկա անցնելը:

6. Կապված արտասահմանյան բուհում ուսուցման տևողությունից՝ ուսանողների ակադեմիական շարժունությունը կարող է լինել կարճաժամկետ և երկարաժամկետ:

7. Միջազգային կարճաժամկետ ակադեմիական շարժունության տևողությունը կարող է կազմել ոչ ավելի քան 1,5 ամիս՝ տարբեր թեմաներով ամառային և ձմեռային դպրոցներին, լեզվական դասընթացներին, սեմինարներին մասնակցելու, պրակտիկաներն անցկացնելու ձևով:

8. Ուսանողների երկարաժամկետ միջազգային ակադեմիական շարժունության տևողությունը կարող է կազմել 1.5 ամսից ավելի, բայց երկու կիսամյակից (10 ամսից) ոչ ավելին:

9. Սույն Կանոնակարգի իրականացման գործառույթների պատասխանատվությունը կրում է Համալսարանի արտաքին կապերի և համագործակցության բաժինը:

## II. Ուսանողների միջազգային ակադեմիական շարժունության նպատակները

10. Ակադեմիական շարժունության հիմնական նպատակն է՝ Համալսարանի ինտեգրումը միջազգային կրթական տարածքում:

11. Ակադեմիական շարժունության նպատակներն են՝

- ուսուցման որակի բարձրացումը,

- միջազգային աշխատաշուկայում մրցունակության մակարդակի բարձրացումը,
- Համալսարանի կրթական ծրագրերի համապատասխանեցումը միջազգային պահանջներին:

### III. Ուսանողների միջազգային շարժունության հիմքերը

12. Ուսանողների միջազգային շարժունությունը կարող է իրականացվել.

- միջբուհական համագործակցության պայմանագրերի հիման վրա՝ համաձայն միջազգային գիտակրթական ոլորտում Համալսարանի կողմից կնքված համաձայնագրերի, դրամաշնորհային ծրագրերի, նախագծերի, ինչպես նաև ՀՀ ԿԳՆ կողմից կնքված միջազգային ծրագրերի,

- արտասահմանյան կրթական, գիտական և հասարակական կազմակերպությունների, գիտաժողովների կազմկոմիտեների և այլ մարմինների կողմից ուղարկված հրավերների հիման վրա,

- ուսանողի սեփական նախաձեռնության հիման վրա:

13. Այն դեպքերում, երբ մասնակցությունը միջազգային ակադեմիական շարժունության ծրագրերում կատարվում է մրցութային հիմունքներով, ուսանողների ընտրությունն իրականացվում է ղեկանատի և համապատասխան ամբիոնի համատեղ նիստի որոշմամբ:

14. Ուսանողի՝ միջազգային ակադեմիական շարժունությանը մասնակցելու հարցը որոշում է Համալսարանի ռեկտորը՝ ռեկտորի անունով ուսանողի դիմումի հիման վրա (*հավելված 1*):

15. Դիմումին կից ներկայացվում է ուսանողի, ֆակուլտետի ղեկավարի (ղեկանի) և ընդունող բուհի ներկայացուցչի միջև ստորագրված և կնքված եռակողմ ուսումնական համաձայնագիրը (*հավելված 2*): Համաձայնագրում նշվում են այն դասընթացները, որոնք ուսանողը պատրաստվում է սովորել ընդունող բուհում և այդ դասընթացներին համապատասխանող մայր բուհի տվյալ մասնագիտության (ուղղության) տվյալ կուրսի ուսումնական պլանով նախատեսված դասընթացները:

16. Շարժունության մասին դրական եզրակացություն ստանալու դեպքում ուսանողի և ռեկտորի միջև կնքվում է երկկողմանի պայմանագիր, որում ամրագրվում են ուսանողի և Համալսարանի պարտավորությունները և իրավունքները՝ կապված շարժունության իրականացման, արդյունքների հաշվառման և ուսանողի վերադարձից հետո Համալսարանում նրա ուսումնական գործունեության կազմակերպման հետ:

### IV. Միջազգային կարճաժամկետ ակադեմիական շարժունության կազմակերպում

17. Արձակուրդների ժամանակահատվածում իրականացվող կարճաժամկետ միջազգային շարժունությունը կարող է իրականացվել առանց ֆակուլտետի/բուհի ղեկավարությանը տեղյակ պահելու:

18. Ուսումնական կիսամյակների ընթացքում կարճաժամկետ ակադեմիական շարժունությանը մասնակցելու դեպքում ուսանողը պարտավոր է Համալսարանի ղեկավարությանը ներկայացնել ստորագրված եռակողմ ուսուցման համաձայնագիր, կամ տվյալ ծրագրով ընդունված նմանատիպ այլ փաստաթուղթ՝ շարժունության ընթացքում ուսումնասիրվող դասընթացների և դրանց համապատասխանող կրեդիտների նշմամբ:

19. Կարճաժամկետ միջազգային շարժունության ընթացքում ուսումնասիրված դասընթացի հաշվառման համար ուսանողը պետք է ներկայացնի դիմում ռեկտորի անունով՝ կցելով այդ դասընթացի ուսումնասիրումը և ձեռք բերած կրեդիտները հավաստող փաստաթուղթ:

20. Կարճաժամկետ ակադեմիական շարժունության արդյունքում ուսանողի ուսումնասիրված առարկան և ձեռք բերած կրեդիտները կարող են հաշվառվել Համալսարանում նրա ուսումնասիրված դասընթացների շարքում, ինչպես նաև նշվել դիպլոմի հավելվածում:

21. Դրական որոշման դեպքում հաշվառված դասընթացների տվյալները գրանցվում են ուսանողին վերաբերող տվյալների հենքերում, ինչպես նաև նրա դիպլոմի հավելվածում:

## V. Միջազգային երկարաժամկետ ակադեմիական շարժունության կազմակերպում

22. Ուսանողը համարվում է միջազգային երկարաժամկետ ակադեմիական շարժունության ծրագիրը շահած անձ, եթե նա ընտրվում է համապատասխան ծրագրի ընտրող կոմիտեի կամ ընտրության գործառույթներ իրականացնող այլ մարմնի կողմից:

23. Շարժունության երկարաժամկետ ծրագրերին դիմելու հետ կապված բոլոր գործառույթները կատարվում են համաձայն տվյալ ծրագրի ղեկավարության կողմից ներկայացվող պահանջների և համաձայն սույն Կանոնակարգի 14, 15 կետերի:

24. Դիմումի հետ ուսուցման եռակողմ պայմանագիրը չներկայացնելու դեպքում ուսանողը պետք է ներկայացնի գրավոր պարտավորագիր՝ արտասահմանյան բուհում ուսումը սկսվելուց հետո 3-շաբաթյա ընթացքում էլեկտրոնային փոստով, կամ ֆաքսով այն ներկայացնելու մասին:

25. Ուսանողն իրավունք ունի փոփոխել իր անհատական ուսումնական պլանը՝ շարժունությունը սկսելուց հետո 3-շաբաթյա ընթացքում ուղարկելով ընդունող բուհում ստորագրված և կնքված փոփոխված անհատական պլանը (էլեկտրոնային փոստի, ֆաքսի միջոցով):

Փոփոխված անհատական պլանը ուժի մեջ է մտնում Համալսարանի տվյալ ֆակուլտետի ղեկանի և ծրագրի համակարգողի ստորագրելուց և կնքելուց հետո:

26. Դիմումի դրական պատասխանի դեպքում Համալսարանի ուսումնական վարչության կողմից տրվում է հրաման, համաձայն որի ուսանողը համարվում է շարժունությանը մասնակցող և Համալսարանից ժամանակավորապես բացակայող:

27. Արտասահմանյան բուհում ուսումնասիրած դասընթացներից դրական գնահատականներ ստանալու և կրեդիտներ ձեռք բերելու դեպքում Համալսարանը պարտավոր է հաշվառել ուսումնառության արդյունքները՝ գրանցելով դրանք ուսանողին վերաբերող Համալսարանի տվյալների հենքում:

28. Համալսարանը պարտավոր է ազատել ուսանողին ուսումնական համաձայնագրում ամրագրված դասընթացների, այլ ուսումնական բաղադրիչների ուսումնական պլանով նախատեսված քննությունների, ստուգաբանների, ստուգման այլ ձևերի վերահանձնումից հաշվառելով նախանշված կրեդիտները:

29. Ուսանողը պարտավոր է ներկայանալ Համալսարանի շարժունության համաձայնագրերում նշված ուսուցման ժամկետը լրանալուց 3-5 օր հետո:

30. Ուսանողը պարտավոր է ներկայացնել դիմում ռեկտորի անունով իր ուսանելու շարունակությունը վերականգնելու խնդրանքով՝ կցելով արտերկրի բուհում սովորած դասընթացների և ձեռք բերած կրեդիտների մասին տեղեկություններ պարունակող ստորագրված և կնքված հավաստագիր:

31. Ուսանողը պարտավոր է մարել տվյալ կիսամյակի ուսումնական պլանով նախատեսված և շարժունության հավաստագրում նշված ձեռք բերած կրեդիտների միջև առաջացած տարբերությունները՝ ելնելով 1 կիսամյակը հավասար է 30 ECTS կրեդիտ համամասնությունից:

32. Համալսարանը պարտավոր է թույլատրել ուսանողին մարելու առաջացած ուսումնական տարբերությունները նրա վերականգնելու հրամանը ստորագրելուց հետո 2-ամսյա ժամկետում:

33.

34. Արտերկրում սովորած դասընթացներից բացակայող գնահատական ստանալը և համապատասխան կրեդիտներ չհավաքելը համարվում է ակադեմիական պարտք: Այդ դեպքում ուսանողը պարտավոր է մարել ակադեմիական պարտքը՝ համաձայն Համալսարանում գործող համապատասխան կարգի:

## VI. Միջազգային ակադեմիական շարժունության մեջ ներգրավված ուսանողների ուսումնական բեռնվածքի որոշման սկզբունքները

35. Միջազգային շարժունության մեջ ներգրավված ուսանողների ուսումնական գործունեության գնահատումը կատարվում է ECTS կրեդիտային համակարգի հիման վրա՝ համաձայն Համալսարանում ընդունված համապատասխան կանոնակարգերի:

36. Շարժունության արդյունքում կրեդիտներով արտահայտված կրթական արդյունքները չպետք է գերազանցեն համապատասխան որակավորում ստանալու համար անհրաժեշտ ընդհանուր ուսումնական ծանրաբեռնվածության բակալավրի կրթական ծրագրի 25 տոկոսը, մագիստրոսի կրթական ծրագրի 50 տոկոսը և հետազոտողի կրթական ծրագրի 30 տոկոսը:

## **VII. Միջազգային ակադեմիական շարժունության հետ կապված ֆինանսական հարցերի կարգավորումը**

37. Շարժունության մեջ ներգրավված ուսանողները պահպանում են Համալսարանում իրենց սովորելու կարգավիճակը (պետության կողմից ուսման վարձի մասնակի զեղչի կիրառմամբ սովորող՝ վճարովի հիմունքներով, կամ պետության կողմից ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ՝ անվճար հիմունքներով սովորող):

38. Երկարաժամկետ կամ կարճաժամկետ շարժունության ծրագրերում ներգրավված վճարովի համակարգում սովորող ուսանողները չեն ազատվում ուսման վճարից և պարտավոր են վճարել այն կիսամյակի ուսման վճարը, որի ընթացքում նրանք սովորելու են արտերկրում: (Erasmus Mundus Guide 2014, page 211.)

39. Միջազգային ակադեմիական շարժունության ծրագրերի ֆինանսավորումը կարող է իրականացվել.

- միջպետական համաձայնագրերով նախատեսված միջոցների,
- Համալսարանի կողմից կնքված դրամաշնորհի, ծրագրի, նախագծի, կրթական և գիտական համագործակցության այլ ձևերի նպատակային ֆինանսական միջոցների,
- բարեգործական կազմակերպությունների միջոցների,
- ուսանողի անձնական միջոցների հաշվին:

## **VIII. Միջազգային ակադեմիական շարժունության մասնակիցների պատասխանատվությունը**

40. Ուսանողների ակադեմիական շարժունության կազմակերպմանը ներգրավված կողմերն են.

- ուսանողը,
- Համալսարանի համապատասխան ֆակուլտետը,
- Համալսարանի արտաքին կապերի և համագործակցության բաժինը,
- տվյալ փոխանակման ծրագրի համակարգողը,
- Համալսարանի ուսումնամեթոդական վարչությունը:

41. Արտաքին կապերի և համագործակցության բաժինը.

- համակարգում է փոխանակման ծրագրերի հետ կապված աշխատանքները,  
- անցկացնում է փոխանակման ծրագրերին նվիրված տեղեկատվական-բացատրական աշխատանք, սեմինարներ և պրեզենտացիաներ՝ նպատակ ունենալով խթանել ակադեմիական շարժունությունը,

- խորհրդատվություններ է անցկացնում Համալսարանի ուսանողների հետ ակադեմիական շարժունությանը նրանց մասնակցության հետ կապված հարցերով,

- հաստատում և զարգացնում է կապերը ընդունող բուհի հետ՝ ակադեմիական շարժունության կազմակերպման նպատակով,

- մասնակցում է ուսուցման համաձայնագրի պատրաստմանը և ստորագրմանը,

- նախապատրաստում է ուսանողի և ռեկտորի միջև կնքվող պայմանագրերը (երկու օրինակից), ներկայացնում ռեկտորին ստորագրելու համար, մեկ օրինակը հանձնում ուսանողին,

- հավաքում և փոխանակման ծրագրերոով նախատեսված ձևով պահպանում է շարժունության ծրագրերի անհրաժեշտ փաստաթղթերը (պայմանագրեր, ուսանողների անձնական գործեր, համաձայնագրեր և այլն),

- ուսումնական վարչությանն է ներկայացնում շարժունության հրամանի ձևակերպման համար անհրաժեշտ տվյալները (ծրագրի անվանումը, ուսանողների անձնական տվյալները, շարժունության տևողությունը, ընդունող բուհի, ֆակուլտետի լրիվ անվանումը, ուսուցման համաձայնագրերի պատճենները և այլն):

42. Ուսումնամեթոդական վարչությունը ստացած տվյալների և ուսանողի դիմումի հիման վրա նախապատրաստում է հրաման՝ տվյալ ուսանողի ակադեմիական շարժունության կազմակերպման վերաբերյալ:

43. Փոխանակման ծրագրի համակարգողը օգնում է ուսանողին՝ ակադեմիական շարժունության ծրագրերին դիմելու և փաստաթղթերը ճիշտ ձևակերպելու հարցերում: